Գ) Քրիստոսի անձնաւորական միութեան կիւրեղեան այս ըմբռնումով՝ միութեան ամէն ձեւ որ անձնաւորական, գոյացական, բնուրեամբ (նյասութեան առջև նույնականութեան պահանջման մեջ) չէ, մերժելի է : Կը պարտազրէ նա նեստորի ստորագրել այս դաւանագիրը . «Մի է Քրիստոս Որդի և Տէր . . . ոչ պատույ կամ արժանապատուութեան կցորդութեամբ, . . . ոչ ալ համակամութեամբ չառաջանական առաջանական գալութիւնը, վասն զի այս անբաւական է բնական միուրեան (πρὸς նյասութեան պահանջման մեջ) համար . ոչ ալ բարեհաճութեան հաղորդակցութեամբ, ինչպէս մենք Աստուծոյ յարելով մէկ հոգի կ'ըլլանց ըստ Ա. Կոր. Զ. 17: Մանաւանդ թէ կցորդուրիւն եղըր՝ ու ուշիւն առաջանական առաջանական գալութիւնը նշանակելու»²: (Տիեզ 12 նորիք, Յութ):

Նեստորի գլուխը տանջող զժուարութիւնն էր թէ կիւրեղ կը վարդապետէ Աստուած մը ախտակրութեան ենթակայ։ Իիւրեղ ամենուրեք հերցած է զայդ։ Ահա թէ կ. Պոլսոյ կզերին ինչ կը զրէ. — Դ' չի զիտեր որ Բաննը՝ ըստ մարդկութեան՝ չարչարուած է, ըստ Աստուածութեան՝ կող չունէր որ խոցուէր. «Այլ օրովհեաեւ Բաննը մարմնոյ միացաւ, ուստի այնպէս եղաւ որ մարմնոյն չարչառուելով՝ իբրեւ իր յատուկ մարմնոյն մէջ առաջակիր՝ մարմնոյն ախտակրութիւնները բրեւ իւրը՝ յինքն կը փոխակերպէր»³։ Եւ իշ առաջ կ'արդարացնէ ինքիննրոր պառ.

Ոիւնհոգոսն (Նեկիական) ալ, Բամել որով
ամէն ինչ դոյցաց՝ չարչարուած կը հաս-
տատէ, յայտնի է մարմնով՝ ըստ Գրոց...»։
Կիւրեղ միշտ հանգանակին կառչած՝ կը
հերքէ հակառակորդներու իմաստակու-
թիւնները, որոնք սեւեռում մ'ունին,
կ'ըսէ, «երկու անձեր, երկու Քրիստոներ
դնելու⁴»։

Քրիստոսի անձնաւորական միութեան
կիւրեղեան այս ըմբռնումը արդէն կ'են-
թագրեն ու կը պահանջեն.

ա) Երկրպագութեան պաշտօնը, որ կ'ուղղ-
դուի միեւնոյն անձին - կը զրէ կիւրեղ
Նեստորին. «Զգուշալի է այսօրինակ բա-
ցատրութիւնը. Անոր համար որ զգեցաւ
զգեցեալը (այս է մարդկութիւնը կամ
մարդը) կը յարգեմ, և աներեւորքին հա-
մար երւելիին կ'երկրպագեմ. եւ կամ
Առեալը՝ Առնողին հետ միասին Աստուած
է». ասոնց՝ զբրիստոս երկուքի կը բաժ-
նեն, այսու՝ «մին՝ միասին մէջ ոչ միա-
ժամանակ կը պաշտուի, ոչ ալ միաժա-
մանակ Աստուած է»⁵: Երկրպագութիւնը
ոչ անհատ մարդու կ'ուղղենք, ոչ ալ մարդ-
կութեան. այլապէս կոսպաշտներէ ոչ մէկ
խտիր պիտի ունենայինք. այլ Բանին Աս-
տուածոյ՝ որ է միանգամայն մարդ: Զիւր-
տեցնէ զքեզ ոչ ալ Փրիստոսի առ Աս-
մարուեին ուղղած խօսքը. «Դուք երկիր

պազանէց որում ոչն զիտէց, մեք որում
զիտեմբն...» վասն զի Ան որ կնոջ հետ
կը խօսէց մի էր, միայնակ թիսուս Քրիս-
տոս Տէր, երկրապատ մարդկուրեն և եր-
կրապագելի աստուածուրենէ բաղկացած, ի՞-
մէջ բովանդակելով զայն որով Աստուած
միանգամայն ու մարդ ըսուիլ ու լինել
լարենար»⁶: (Տես Նզովբներէն, 6, 8):

1. Mansi, IV, 600, *joq. d.ß., ß̄n̄z̄ηp* Ӯh̄uññd̄uñḡ;

2. **U^uq**, 1074, **joq.** b: - 3. **U^uq**, 1003. - 4. **U^uq**:

5. $\Pi_{\mu q}$, 1074...; - 6. $\Pi_{\mu q}$, $\Theta^{\mu\nu}q^{\mu}$ and $\Theta^{\mu\nu}q^{\mu\nu}$,

նին Աստուծոյ հանդէպ հաւատք պահանձեց (Քրիստոս), ինչո՞ւ չըրամայեց կոյրին որ ոչ թէ իրևե այլ աստուածային բնութեան սեւեռէր իր մտաց աչքերը, մինչ ինքզինքը՝ որ մարդկեղէն կերպարանքով էր և աչաց տեսանելի՝ ցոյց տուաւ. «Եւ տեսեր զեա և որ խօսիդ լեզ քեզ» ըսելով, ճիշտ այնպէս ինչպէս մենք ի մեզ մարմնով՝ ամրող մարդը կ'իմանանց ու կը նկատենք, բովանդակելով նաեւ անտեսանելի հոգին¹:

զ) Քրիստոսի սրբարար ղերթ: - Վասն
վի Քրիստոսի մէջ մարդկութեան միու-
թիւնը Աստուծոյ Բանին հետ այնցան
խորարմատ է, այնքան սերտիւ է որ ա-
նոք մարդկութիւնն իսկ, մարմինը՝ իրրեւ
աստուածութեան միացեալ գործիքը՝ սըր-
բարար է և հոգենորոգ: Կը հարցնէ նա,
նորէն առ կայսր զրած թուղթին մէջ.
«Մկրտութեամբ կը զգենունց զՔրիստոս,
ըստ Գաղ. Գ. 26., բայց որո՞ւն անու-
նով կը մկրտուինք ու կը սրբուինք: Մար-
դու, ո՞չ երբեք. այլ Աստուածամարդուն:
Հոգին Սուրբ, որ սրբութեան միակ աղ-
բւրն է Քրիստոսի էք նաև իրրկ մարդ».
ուստի ըստ Գործ. Առ. Բ. 28, «Անոնց
որ իրեն (Քրիստոսի) կը յարին՝ թողով
մեղքերը իր հոգով կ'օծէ զանոնք, զոր՝
երբեւ Հօր Աստուծոյ Բանը՝ ի՞նքը կը ներ-
շնչէ անոնց, և իշր իսկ իսկական բնուրենու-
իրեւ յաղթերի ի մեջ կը նեղու զանի...»: զոր՝
բերնովն ալ կրցաւ ներշնչել Առաքելոց
«Առէք Հոգի Սուրբ» (Յովհ. Ի. 23, կամ
Գ. 3) ըսելով³: Ո՛քան տարերութիւն
կիւրեղեան այս ըմբանումին ու Նեստո-
րամիտ երկուութեան միջեւ: Եւ դեռ ա-
ռաջ պատճեն առ առ առ առ առ առ առ
տուր սարսուն գոյացու մարմինը՝ որ ուտելի է (Յովհ. Զ. 14),
և ոչ թէ Բանը՝ որ կերակուր չի կրնար լի-
նել: Այս իսկական խորհուրդը ի՞նչպէս
կ'իրաքործուի եթէ ոչ շնորհիւ այն սերտ
միութեան որով Աստուծոյ մարմինն է և
ոչ սոսկական անհատի մը: Գոյսութեան
խորհուրդին մէջ Քրիստոսի մարմինը, կը
զըէ առ Նեստոր. «Ոչ իրբեւ հասարակ
մարմին մը, ոչ ալ իրբեւ սրբացած մար-
դու մը կամ Բանին պատուոյն մասնակ-
ցողի մը, կամ ասառածային բնակութեան
արժանացողի մը մարմինը կ'ընդունինք,
այլ իրբեւ ձշմարտիւ կենացործ մարմինը
Բանին: Վասն զի իրբեւ Աստուած կեանք
ըլլալով իւրական բնութեամբ, յետ մի ըլ-
լալու իր սեփական մարմինըն հետ, անոր
շնորհեց իւր կենացործով զօրութիւնը...»⁵:
Մարմինը՝ ոչ իրբեւ սոսկական մարմին
կեցուցիչ է, « մարմին ինչ ոչ օգնէ » —
այլ «զօրութեամբ այն միուրեան որով կե-
նարար ու երկնային Բանին միացած է ».
այսինքն է իրբեւ միացեալ գործիք (instrumentum coniunctum) կեցուցիչ է,
բուժիչ, նաև հաստիչ ու ամենազործ.
(Տիւ 12 նզովքներէն թ. 9, 11):

Երկու բնութիւններու այս ի մի անձն
միութենէն կը հետեւի կը կնակի Բնու-
թիւններու յատկութիւններուն և ստորո-
գելեաց փոխաղարձ հաղորդակցութիւնը
(comunicatio idiomatum) Քրիստո-

1. Mansi, IV, 107. 19, 664. - 2. Ibidem, 107. 19.

665. - 3. Անդ, յօդ, լզ. 667. - 4. Անդ, յօդ, լէ,

668. - 5. *U. uq*, 1077, *soq*. 12.

սական միեւնոյն անձին մէջ: «... Ամէն անուն որ աւետարաններու մէջ կը կարդանք, մի անձի միայն, և մի ծեսու թաեին Աստուծոյ մարդացերոյ գոյացութեան հարկ է ստորոգել: Մի և Տէր Յիսուս Քրիստոս ըստ զրոց»¹: Հետեւաբար Կիւրեղի սուր զիտողութեան համեմատ. «Ոչ թանը՝ Քրիստոսի Աստուած ու Տէր կարելի է անուանել, ոչ ալ զՔրիստոս երկուքի բաշխած՝ մին միւսին տէր ըսել (ամբարշտական է այս). ինքն իրեն ոչ տէր է և ոչ ալ ծառայ: Իրաւ է որ Հայրը՝ իր Աստուածը կ'անուանէ, ծնած է ի Հօրէ, և իրքեւ մարդ՝ հպատակ է Աստուծոյ, սակայն չէ որէն ըսել որ ինքն իրեն Աստուածը ու տէրը ըլլայ»². որովհետեւ մի է գէմըը, մի է անձը: (Տես Նզովքներէն՝ 4): Մանաւանդ թէ «Հնորհիւ այս անօրինական միութեան բազմիցս կը տեսնենք (որ Քրիստոս) երկու բնութիւններու յատկութիւնները բնտելաբար ինքեան կը սեփականէ»³: Այսպէս Առաքեալը կողոս. Ա. 12., կ'ըսէ թէ Քրիստոս «հաստիչ է իրքեւ Աստուած, թէեւ յետ միութեան առանց մարմնոյ անիմանալի է. իսկ մեռեալներուն ալ Անզրանիկը կը կոչուի...»⁴: Նմանապէս Յովհ. Ա. 1, Ա. Կոր. Բ. 6. պատգամներուն համեմատ զոյգ բնութիւններու կատարելութիւնները մի անձի վրայ խմբուած են, ուստի «վտանգաւոր է բաժանում դնելը. մի է Տէր Յիսուս Քրիստոս, որով Հայր ամէն ինչ հաստեց»⁵: Այսպէս ինքը Քրիստոս նիկողեմոսին կը լցաւ ըսել. «Ոչ ոք եւ յերկինս եթէ ոչ որ էջն յերկնից Որդին մարդոյ՝ որ էն յերկինս» (Յովհ. Գ. 22.), կամ «Եթէ տեսանիցէք զՈրդի մարդոյ ուր էր զառաջինն» (Յովհ. Զ. 63): «Ո՞ւր էր յառաջազոյն, կը հարցնէ Կիւրեղ, կամ ինչպէս հոն ելած կ'ըսէ ուր արդէն կանխսաւ էր»⁶, եթէ ոչ վերագրելով ինչ որ աստուածային կամ մարդկային բնութեամբ ունէր՝ միեւնոյն անձին: Եւ զարձեալ Ա. Գիրը կ'ըսէ «Յիսուս Քրիստոս երէկ և այսօր նոյն և յաւիտեանս» (Երը. Ժ. 8): Քրիստոս որոշ դարու մը մէջ ծնաւ, ինչ-

պէս կրնայ այս մշտն ջենաւորութիւնը վայելել։ «Ի՞նչպէս կրնայ մարդկային բը-նութիւնը որ փոփոխական է և մանաւանդ յանզոյէ ի զոյութիւն եկած է, անփոփոխութեան և նոյնութեան մէջ անշարժ յարատեւել»։ Բանին Աստուծոյ համար հեշտեաւ կ'իմանանք, բայց Քրիստոս տիտղոսը՝ միայն Բանը չի նշանակեր։ Ուրեմն Ա. Գիրքը կը սխալի՛ Ո՛չ Յիսուս ինքը կը հաստատէ թէ Արբահամէն հնագոյն է (Յովհ. Բ. 58). Նոյնը կը դաւանի Մկրտիչ՝ որ երիցագոյն էր վեց ամսով քան զՅիսուս (Յովհ. Ա. 30), Արքիա, Ե. 2. և Ա. Կոր Ժ. 20. Պօղոս կը հաստատէ թէ Մովսէսի ժամանակակից վեմը եր Քրիստոս «Եւ վէմն էր ինքն Քրիստոս»։ դարձեալ Յովհ. աւետարանիչ (Ա. Յովհ. Ա. 1) «Որ էրն ի սկզբանէ...», զոր՝ տեսանք ու շօշափեցինք կ'ըսէ։ - Հուսկ Հայրապետիս ազդու և խորին մեկնութիւնները հոն կը յանզին որ համայն Ա. Գրքի ըրիստոսաբահական հատուածները անբացատրելի են առանց Եփեսական ուղիղ դաւանութեան։ Այսպէս զըսոյց մը կը դառնայ Աստուծոյ այն ունայնացումի գաղափարը որ Պօղոսի աստուածաբանական վերացումներուն լիսեռն է։ «Որ ի կերպարանս Աստուծոյ էր... ոչինչ յափշտակութիւն համարեցաւ... զանձն ու հայեցոյց» (Փիլիպ. Բ. 6)։ Վասն զի չկայ ունայնացում՝ եթէ Ան որ Աստուծոյ հաւասար էր՝ միեւնոյն չե Անոր հետ որ ունայնացաւ։ Զօգներ նեստորամիտ բարոյական միութիւնը, կամ բնակակցութիւնը, Ա. Երրորդութիւն կը բնակի հաւատացեալներու մէջ (Յովհ. Ժ. 23), բայց երբեք ունայնացած չ'ըլլար այնու։

1. Mansi, IV, 1078. - 2. $\text{U}^{\text{u}}\text{q}$, 1074, $\text{J}^{\text{o}}\text{q}$. 3. $\text{U}^{\text{u}}\text{q}$, 667-670. - 4. $\text{U}^{\text{u}}\text{q}$, $\text{J}^{\text{o}}\text{q}$. 1. P^{v} . - 5. $\text{U}^{\text{u}}\text{q}$, $\text{J}^{\text{o}}\text{q}$. 6. $\text{U}^{\text{u}}\text{q}$, $\text{J}^{\text{o}}\text{q}$. 1. P^{v} .

պատմական կեանքը : Անիմաստ՝ ասուած՝ պաշտութեան խորհուրդը, փրկագործութիւնը, որ իսկապէս կը կայանայ Աստուածամարդուն մահուամբ՝ մահու ըստ ըստ կութենէն ազատազրութեան մէջ . ըստ որում, Աստուած՝ կեանքի հեղինակը՝ իր մարմնոյն մէջ պէտք էր կրել յանցանցի արդար պատուհասը մինչեւ ցմահ, և նոյն Աստուածը՝ այս ինքնայօմար պատուհասով ունայնացած մարմնով՝ ցորենի հատին պէս վերընձիւդէր ու նորանոր կեանքեւ ըստ յաւերժութեան սկիզբ ըլլար :

Անիմաստ կը դառնայ նոյնինքն փրկաստու (օծեալ) գաղափարը : Վասն զի հայ-հոյիչ մ'ես եթէ թանը իրբեւ Աստուծոյ Որդի օծեալ իմանաս Ա. Հոգովը, իրբեւ քայցայող համազութեան և հաւասարութեան դաւանանցին . դարձեալ եթէ ուզես «զանի՝ զոր Ա. Կոյսը ծնաւ, սոսկապէս, այսինքն իր անհատական գոյացութեան մէջ օծեալ և սրբեալ, ուստի անոր համար ալ Քրիստոս կոչուած» ենթագրել, պէտք է որ ջնջես Ա. Գրբի բոլոր այն էջերը ուր Քրիստոս համապատիւ կը քարոզուի Հօր իրբեւ Որդի, (Սաղմ. Բ. 10-16 եւն...) և հաւասար երկրպագութիւն կ'ընդունի : «Քրիստոս» անունը ոչ Բանեին առանձին, ոչ ալ մարդկուրեան առանձին կը պատշաճի, այլ միուրեան է : Օծման իւղը՝ կիւրեղեան լուսաւոր դաւանազրին համաձայն՝ ինքը թանեն է, որ թափեցաւ կուսածին մարդկուրեան վրայ և նոյնով յացաւ ծնաւ Աստուածամարդ Քրիստոս օծեալ², (Տես Եղովք. 12) : Ուստի յետ մարդկութեան՝ ոչ մարդկութիւնը կարելի է ասսուածուրեան մերկացնել, ոչ ալ թանը մարմնէն զատել, այլ « միեւնոյն Որդին երկու իրերէ³ ի մի զուգուած » դաւանեւու է⁴,

Երկու չջօր տար ուլուագիծ
ՊԱՏՐԻԱՐքութիւններ է կիւրեղեան խո-
դէՄ ԱՌ ԴէՄ ըին Քրիստոսաբա-
նովթեան՝ ինչ որ
վերեւ պարզեցինք, որ իւր ամբողջութեան
մէջ Հռոմայ մեծ Հայրապետին Ա. կեղեւ-
տինոսի ու անոր հետ Արեւմտեան և Արե-
ւելեան բազմաթիւ Հայրապետներու հիա-
ցումը շարժեց, ու խաւարի մէջ խարիսա-
փող Նեստորի մոլուցը՝ Աղեքսանդրիոյ
աթոռին դէմ:

Կ. Պոլիս՝ կայսերանիստ Ոստանը՝ միշտ
իրեն սպառնացող մրցակից ու նախան-
ձորդ նկատեց Եզիպտոսի մայրաքաղաքը՝
Արեւելեան բուր աթոռներուն մէջ։ Ա-
ղեքսանդրիա՝ կղեմէսովլ, Որոգինով ու
Աթանասով անմահացած էր։ Անտիոք՝
Ասկերերան մը պարզեւած էր Բիւզան-
դիոնի, բայց անոր փայլ նսեմացնել
փորձեց կաղնեաց Ժողովը՝ 403ին Թէո-
փիլոսի նախաձեռնութեամբ։ Կիւրեղ աւ
ականատես եղած էր իր հօրեղբօր այս
վրէժինզրութեան։ Նոյն Անտիոքը, — ար-
դէն մեկնողական դպրոցով նախանձորդ
Աղեքսանդրիոյ — ուրիշ ճարտարախօս Հայ-
րապետ մ'ալ բարձրացուց մեծ Ոստանի
աթոռին վրայ, Նեստոր, որուն խիստ
ծանօթ էր Անտիոքի սերտ զօդը, իր նոր
աթոռին, ինչպէս նաեւ Աղեքսանդրիոյ
ձգտումները։ Բիւզանդիոն՝ կայսրութեան
ոչ մէկ բաղաբէն ստորագաս պէտք էր մը-
նալ։ Եկեղեցական իրաւասութեան մէջ
աւ զոնէ Հռոմէն յետոյ երկրորդ ըլլալու
էր աշխարհիս վրայ, և առաջին՝ Արեւել-
ակ մէջ։


Mansi, IV, 602-605, *юq.* **дб-дф-***я*. - 2. **у́нq.**
юq. **дф-** - 3. «**Улбага** *л* **тун***и* **тка***мр*» (*φυσική*)
наг». **Ч**арта *к*и **н** *л* **я** *р* **и** *в* **и** *т* **а** *г*; - 4. **у́нq.**, 679.
юq.

Изд. Издательство Академии Наук СССР 1931

հօտը մոլորութեան ծաւալումէն¹։ Եւ մինչ Նեստոր ճիգեր կը թափէր Եզիպտոսի վաս նականութեան միջոցաւ իր նորակրօնութիւնը սերմաննելու Աղեքսանդրէան աթոռի սահմաններուն մէջ, կիւրեղ անմիջապէս վարդապետական թղթով² մը ունայնացուց անոր փորձելոր, ինայելով տակաւին աղանդապետին անունն հրապարակել։ Կիւրեղի այս աշալուրջ արթնութիւնը զայրացուց զԱնեստոր, որ ձեռք առաւ անոր արդար խստութենէն խուսափած քանի մը անկարգ վանականներ, անուանարկելու երկրորդ թուղթ մ'ալ ուղղեց անոր³։ Նեստոր՝ առաջին նամակին պատ ի պատ պատասխանած էր. երկրորդին՝ երկարօրէն զրեց, իւր տեսութիւնները պարզելով ու մեղաղը ելով կիւրեղի բանաձեւերը⁴։ Եզիպտացին լաւ թափանցած Նեստորի հիմնական շեղումներուն ու յաման հոգեբանութեան՝ զանազան թուղթելով յաջորդաբար ջանաց Պոլսոյ կղերն ըզգուշացնել, նոյնիսկ իր հակառակորդին համախոհները⁵։ Բայց ամէն ճիգ ի զուրէր :

Երկու պատրիարք
Ամենելիք ՈՒ ՀՈՒՄ քութիւններու այս
ձգտուն թղթակցու-
թիւններու ընթացքին կոյր սեւեռում մը
միայն կը դրդէր զնեստոր. իշխել իր աս-
տուածաբանութեամբ և կիւրեղն զգետնել:
Ուստի 429ին առ Ա. կեղեստինոս պապ
(422-432) յաջորդաբար երեք թուղթեր
փութացուց, վերջինիս կցելով նաեւ իր
զբուածքներէն ալ հատուածներ, որոնցմով
կը հետապնդէր անոր համակրութեանը
հետ իւր կարծեաց վաւերացումը վաստը-
կիլ, և ժողովի մը գումարումն ալ՝ ինչ
ինչ հարցերու կարգադրութեան համար:
Հոն խորամանկ ուազմայարդարով մը բեմի
վրայ կը հանէ նա Հռոմայ ժողովքով
դատապարտուած Պեղագիան հարցը, Ա.
Հայրապետին կարծիքը կը ինդրէ, սա-
հեցնելով մեղմիւ իր մոլար վարկածն
ալ, թէ իր մօտ ալ ումանք տղիտաբար
զՄարիամ ԱՍՏՈՒԾԱԾԻԿ անուաննելով Ա-
րիոսի ու Ապողինարի աղանդը կը վեր-
արձարձեն: Կեղեստինոս՝ իրազեկ արդէն
Եղիպատոսի վանականներուն մէջ եփած
յուզմունքին՝ Նեստորը անպատճիւան
թողուց, և կիւրեղին դիմեց լաւազոյն լու-
սաբանութիւններու համար: Այս տարի մը

1. 17րդ քարոզով. MPG. հա 77. սին 773. - 2.
Mansi, IV, 587 և 5. - 3. Անդ. 883. - 4. Անդ. 618
- 679, 679-807, 803-883. - կամ MPG. հա. 76. -
5. Mansi, IV, 887. - 6. Անդ. 891. - 7. Անդ. 899,
1003.... - 8. Անդ. 1021, 1023.



1. Mansi. IV. 1011. 1015. —

11 0գոստոս 430ին Հոռմ կարողէ ու կը ջատագովէ : Եւ այս մասին ցու ողջմտութեանդ տեսութիւնը ու վժիւը Մակեղոնիոյ եպիսկոպոսներուն ու համայն կիտապետներուն յայտնապէս գը- րաւուր պէտք է ներկայացուի...¹» : Կիւրեղ աներկբայ էր իր ջատագոված վարդապե- տութեան ուղղափառութեան, այնուհան- դիրձ չէր համարձակիր առանց Հոռմի՝ խզել հաղորդակցութեան կապերը Աղանդապե- տին հետո, զիտէր թէ Մակեղոնիոյ և Արեւե- ւեան եպիսկոպոսներու բազմութիւնը հա- մամիտ են ու դաւանակից իրեն, հակա- ռակ Նեստորի, Հոռմէն կը հայցէր սակայն որ անռնց ալ հաղորդէ իր վճիռը : Զա- փազանց խօսուն են ասոնք կիւրեղի, ժա- մանակակից եպիսկոպոսութեան և հետե- ւարար Ընդհանուր Արեւելեան Եկեղեցւոյ համոզումը շօշափելու համար Հոռմայ Ա- թոսին գերին նկատմամբ :

1. Mansi, IV, 1011-1015. - 2. Uzq, 1017-1021.

դէն ու, սաստէն : Ահա անոր, սուղ պարունակութիւնը, — կը յիշատակէ Պեղագեաններուն դէմ իր հանած զատապարտութեան մէջ համաձայնութիւնը Նեստորի աթոռին երջանկայիշատակ նախորդներուն. ուրախակցութիւնը՝ իւր ընտրութեան առթիւ ընդունած զովեստներուն, ապա խոր վիշտը անոր հայհոյալից թուղթերն ընդունելուն. « Կը կարդանք նամակներուն պարունակութիւնը, և այն զրբերուն զորս մեր ծանօթ որդոյն Անտիոքոսի ձեռքով ստացանք, յորս... շատ խօսութեան բռնուած կը թուիս մինչ ճշշմարտութիւնները մթութիւններու կը խսունես, նմանապէս երկու րան շփոթելով, կամ մերժածներդ վերստին կը խոստովանիս, կամ ալ կը ճգնիս խոստովանածներդ մերժել: Բայց այդ թուղթերուով մէջ ոչ թէ մեր այլ քու հաւատքիդ մասին բացերեւ վճիռդ կու տաս, մինչ կը կամնաս Բանին Աստուծոյ մասին ամենուն դաւանածին դէմ հակածառել: Ահա թէ քու մասին ինչ վճիռ տալու հարկադրուած ենք. ահա նորակրօնութեանդ բարիքները. զանխուլ ընտրուեցար, և յայտնապէս ինքզինք կ'ամբաստանես: Թէկ Մեր եղայրակիցը կիւրեղ կրկին նամակով քեզ ազդարած է, կ'ուզեմ զիտնաս որ իր առաջին ու երկրորդ և մեր այս ազգէն յետոյ, որ երրորդը կ'ըլլայ, եթէ իսկոյն չուղես սիալներդ ու չգտառնաս այն շաւզին որ ինքն Քրիստոս է, բրիստոնէական համաշխարհական Եկեղեցին անջատուած ես: Ոչ միայն պատեհ ժամանակին չես սնուցաներ (հօտը), այլ թոյնով ալ կը մահացնես զորս (Քրիստոս) իր արեամբ և իր մահով զնեց: Թոյնը քու ըրթանցդ ներքեւն է, զոր անէծքով և զառնութեամբ լի կը տեսնենք, մինչ կը ճգնիս մարտնչիւ անոր դէմ որ բաղըր է : . . . Ուրախ ենք այնու որ (կղերն ու ժողովորդը) խոստովանողի մրցանակը ժառանգած են, սակայն կը ցաւինք որ հովուին հաւածներով է: . . . Աղեքսանդրեան Եկեղեցոյ բահանային հաւատքը է: . . . Աղեքսանդրեան Եկեղեց կը հաստատեցինք ու կը հաստատենք »: Հուսկ կը հրամայէ զա-

1. Mansi, IV, 1026-1035; - 2. **S^bu m^uq'**

հութիւնը, և հուսկ կը կցէ Նեստորի դա-
տապարտութեան բանաձեւը¹: — Ապա
կիւրեղի թելազրութեան համեմատ Անտիո-
քի Յովհաննէս Հայրապետին ալ թուղթով
մը կը հաղորդէ Նեստորի մասին սահ-
մանուած կարգագրութիւնները. թէ մոլո-
րութիւնը վէճ չի տանիր, Նեստորին իսկ
ստորագրութեամբ կնքուած է. յապազում
չի կրել, թշնամին աւելի երկիւղալի է
պարիսպներուն մէջ. հուսկ կը կցէ հա-
ւառոյ դաւանութեան պայմանագիրը²: Այս
համակին պատճէնը զըկուեցաւ նաեւ Ե-
րուսաղէմի Յորնաղին, Թեսաղոնիկէի Հոռու-
փոսին, Փիլիպպեցւոց Փլարիանոս եպիս-
կոպուներուն: Ահա կեղեստինոսի առաքե-
լական սցանչելի փոյթը, իմաստութիւնն
և կորովը:

Ուշագրաւ կէտ մ'է որ բովանդակ այս
թղթակցութիւններու ընթացքին ոչ մէկ
ակնարկ կայ Տիեզերական ժողովի, ոչ
կեղեստինոսի կողմէ որ արդէն դատը բե-
կած էր. և ոչ ալ կիւրեղի՝ որ վճռաբեկ իշ-
խանութեան կը հաւատար, ոչ ալ նամակ
մը կայսեր, մինչ զահընկէցութեան ըս-
պառնալիքը կապուած էր կայսեր բազ-
մեցուցած պատրիարքին յամառելուն:

Ա. Կիւրեղ հազիւ ընդունած իր Պոսի-
դոնիոս սարկաւագէն Հառմի հրահանգները՝
դործի լծուեցաւ: Իսկոյն թուղթ մը փու-
թացուց Յովհաննէս Անտիոքացիին, արդա-
րացնելով ինքինը՝ թէ նախանձի համար
չէր որ Հոռոմ գիմած էր, ինչպէս կը կար-
ծուէր, այլ կանխաւ արդէն հոն փոթորիկը
փրթած էր Նեստորի գրութիւններէն. ի-
որ չգովէ զբեզ երբ այդ անունը՝ որուն
իմաստը կը դաւանի Զեր բարեպաշտու-
թիւնը, ինչպէս իմացանը, հասարակաց
խաղաղութեան համար ընդունի »³: Ան-
տիոքի հայրապետը կը դաւանէր Աստուա-
ծամայրորիւնը, և այն համոզումն ունէր
որ Նեստոր ալ դաւանակից է, ու միայն
Աստուածածին տիտղոսէն կը խորշի, ուստի
հէշտին միջոց կը համարէր Արեւմուտքի,
Եղիպտոսի ու Մակեդոնիոյ յուզումները
անզորրացնելու՝ ընդունիլ այդ անունը:

Կիւրեղ հեռու էր սակայն այսցան մեղմ
խորհելէ Նեստորի մասին, իր արդար նա-
խանձն ու ճիգերը ծայրայեղ նախանձա-
րեկութիւն մը չէին, ինչպէս Յովհաննէս
միտեցաւ կարծել: Կիւրեղ յանձին Նես-
տորի աղանդաւոր մը կը տեսնէր որ Ե-
կեղեցւոյ իսկ ծոցին մէջ համաճարակ կը
ծաւալէր. «զի համօրէն Եկեղեցւոյն վնա-
սեցիր, կը զրէ, ոչ միայն անոնց որ ի
կ. Պոլիս են, այլ ամենուն և ամենուրեք
նոր ու անօրինակ մոլորութեանդ շառա-
փող սփռեցիր»: Ուստի յանուն իր և իր
Սիւնհողոսին՝ նամակով մը պարտադրեց
Հոռմի հրահանգները⁴, կցիլով նաեւ ա-
նոնց իր երկոտասան նզովքները, հետե-
ւելով Պապին հրամանին որ կը հրամայէր
դաւանագիր մ'ալ ներկայացնել Նեստո-
րի ստորագրութեան: Այս էր իրերու
կացութիւնը երբ խորամանկ Աղանդա-
պետը նոր ուազմաճակատ մը բացաւ,
վրիպեցնելու համար Հոռմայ վճիռը և
կիւրեղի յաջողութիւնները:

1. Mansi, IV, 1037–1047. – 2. Անդ, 1047. – 3. Անդ, 1045–1052. – 4. Անդ, 1053. – 5. Անդ, 1065. – 6. Անդ, 1061–1068. – 7. Անդ, 1068–1084. – 8. Ճողովի առաջին ձայնը կը լսուի Նեստորի առ Պատմուսի 15 Մարտ 432ին Պոլսոյ Կղերին ուղղած նախառափ Գրքին մէջ նոյնը կը հաստատուի, ինչպէս նաև Հերակլոսի գաղտնաբառը կ'ապացուցանէ թէ Նեստորի եղած է ճողովի գլխաւոր պահանջողներէն մին.

Բարսեղ սարկաւագին առ կայսր ուղղած
աղերսազրին մէջ ալ իրբեւ դարման տի-
րապետող չարեաց՝ Տիեզերական ժողովի
մը գումարումը կ'առաջարկուէր¹:

19 Նոյ. 430 թուակիր հրովարտակ
մը², թէողոս նի ու Վաղենարիանոս գի
անունով հրատարակուած, կը սահմանէ
Եփեսոս քաղաքը իրեւ ժողովատեղի նոյն
տարւոյն Պենտեկոստէին գումարուելիք ժո-
ղովին, որուն մինչեւ բացումը ամէն հարցի
լուծումը առկախ թողով կը պատուիրէ.
— որպէս զի, կ'ըսէ, ծագած վէճերը քնն-
նուին, ու «այն բաները որ ոչ այնքան
պատշաճօրէն գործուեցան ցարդ, սրբա-
զրուին»: Այն «ոչ այնքան պատշաճ բա-
ները» Հոռմեական կարգադրութեներուն
կ'ակնարկէ: Այս հրովարտակը ամենուրեք
սփոռւեցաւ, իսկ կիւրեղին՝ առանձին թուղթ
մ'ալ թէողոսէն, ուր նա կը սաստէ Հայ-
րապետին ու կը զսրովէ յետին մտցեր
ենթագրելով իշխանուհիներուն ու զըշ-
խոներուն զատ զատ նամակներ ուղղելուն
մէջ:

Կիւրեղ՝ քիչ վստահ կայսեր, զոր Նես-
տորէն խաբուած գիտէր, կեղեստինոսի դի-
մեց՝ հարցնելով անոր կարծիքը թէ կան-
խաւ իր տուած վճռին ազդեցութեան և
թէ արդէն դատապարտուած Նեստորի՝
գումարուելիք ժողովի մէջ բռնելիք դիրքին
նկատմամբ: Պապը Զ Մայիս 431ին զը-
րութեամբ կը միտի իր վճռին յապարման
կողմը, յուսալով մոլորած հովուին ուղ-
ղութիւնը³, և ուրիշ կասկածելի անձերու
ժողովի մասնակցութեան մասին իրեն կը
վերապահէ իրաբանչուած, իսկ առ
ժողովին ուղղուած թուղթին մէջ կը պատ-
ուիրէ որ «գործադրել պիտի տան, (Ար-
կադիոս, Պրոյեկտոս և Փիլիպոս իւր-
նուիրակները) ինչ որ միանգամ վճռե-
ցինք»⁴. նուիրակներուն ալ կը պատուիրէ
կիւրեղի կողքէն աերածան մնալ, Առաքելա-
կան Արոսի հեղինակութիւնը պաշտպանել.
և չմասնակցի երեք վիճարանութիւննե-
րու, այլ միայն դատարի դերը կատարել⁵:

կեղեստինոս իրեւ հաւատքի պահապան՝
թիկունք կը հանդիսանայ կիւրեղի հաւատ-

թին. վստահ անոր բարձր ձիրքերուն՝ կը
յանձնէ ժողովի գործերը, սակայն չի լիա-
զօրեր զանի՝ բայց եթէ որոշ հրահանգի
մը գործազրութեան համար: Ուստի կիւ-
րեղ թէեւ Նախագահ Եփեսոսի, այլ ոմն
կեղեստինոս չի կարգուիր:

Ժողովը պէտք էր բացուիլ 7 Յունի-
սին. բայց Արեւելեան եպիսկոպոսները
Յովհաննէս Անտիոքացի զլիստորու-
թեամբ՝ կը բացակայէին, պապական նը-
րիրակներն ալ չէին ժամանած. անօգուտ
եղաւ սպասումը, ուստի կիւրեղ 22 Յու-
նիսին ողջունեց Ա. Նիստը, իրեւ տեղա-
պահ Պապին, 159 եպիսկոպոսներով:
Բննութեան ենթարկուեցան կիւրեղի, Նես-
տորի գրուածքները ու վերջինս դատա-
պարտուեցաւ. ապա կարգացուեցան Հոռ-
մայ Եկեղեցւոյն և կեղեստինոսի Աղե-
սանդրիոյ Եկեղեցւոյն և կիւրեղի առնեսոր
ուղղած թուղթերը. հուսկ Ա. Հարց վկա-
յութիւններով վաւերացուեցաւ ուղղափառ
հաւատքը. Նեստոր՝ իրեւ յամառող՝ գահ-
ընկէց եղաւ⁶. ուր դատապարտութեան
բանածեւը կ'ըսէ. «Հարկադրուած առյու-
նականներէն ու մեր Ա. Հօր և պաշտօ-
նակից կեղեստինոսի՝ Հոռմայ Եպիսկոպոսի
նամակէն,.. այս տիսուր վճռոյն կը յան-
դինք. Տ. Ա. Յ., զոր հայնոյեց նա,
այս ամենասուրը Աիւնհողոսի ծեացով ըզ-
Նեստոր եպիսկոպոսական աստիճանէ զըլ-
կըւած և համօրէն քահանայական դասէն
անջատուած կը սահմանէ»⁷:

Անդին Նեստոր ու բարեկամը թուղէ.
Անտիոքացի, գայթակած 12 նզովցնե-
րու պարունակութենէն, չարաժողով գու-
մարեցին Արեւելեան եպիսկոպոսներու հետ
ունզովեցին զիւրեղի իրեւ Ապողինարեան,
ու Եփեսոսի Մեմոն եպիսկոպոսին հետ
գահընկէց հոչակեցին իրեւ խոռվարար,
զանցառու կանոնաց, անհնապանդ կայ-
սեր, և հերետիկոս:

Եփեսոս այս անելին մէջ էր երբ Յու-

1. Mansi, IV, 1101-1108. - 2. Անդ, 1112-1115.
- 3. Անդ, 1292. - 4. MPL, չո. 50, 512 A. - 5.
MPL, անդ, 503. - 6. Անդ, 1213. - 7. Անդ, 1212.

լիսի սկիզբը հասան Հոռմի Նուիրակները՝
Արկադէս, Պրոյեկտոս՝ եպիսկոպոսներ,
և Փիլիպոս՝ երէց: Յուլիս 10ին Բ նիստն
սկսաւ, և իսկոյն Փիլիպոս՝ պապական
նուիրակներ՝ յիշատակեց Ա. կեղեստինոսի
թուղթը առ Հայրապետն Աղեքսանդրիոյ,
յորում վճռած էր ներկայ դատի մասին.
և թէ ուրիշ մ'ալ նորէն ուղղած էր ժո-
ղովին, որուն առժամանակ ընթերցման հրա-
մանին կը սպասէ: Եոյնը կրկնեցին միւս
նուիրակներն ալ աւելցնելով. «Ճեսէր
այսու րէ ինչ խնամքը կը տածէ (կեղեստինոս)
համօրէն Եկեղեցիներու վրայ...»¹: Պապին
թուղթը լսուեցաւ նախ լսախներէն, ապա
ըստ ինզրոյ Հարց, յունարէն: Ա. Հայրա-
պետը յետ միութեան հրաւիրելու ժողովա-
կան Հայրեցի, «Պատուիրակներն առաքե-
ցինք, կ'ըսէ, որպէս զի ժողովի մասնակ-
ցին ու կանչիաց Մեզմէ տրուած որոշումները
դորձարդուն: Զենց տարակուսիր թէ Զեր
սրբութիւնը պիտի հաւանի, երրոր ինչ որ
կը գործուի տիեզերական Եկեղեցւոյ ա-
պահովութեան համար վճռուած երեւի»: Ընթերցման վերջաբանին՝ ժողովակներին
թնդաց համօրէն եպիսկոպոսներուն աղա-
ղակով. «Արդար և այս դատաստանը թէ ամեն ինչ լսու
կանոնի և Եկեղեցական կարգապահութեամբ
վառուած է» ու խնզրեց նախորդ նիստին
մէջ կարգացուածներուն վերստին ընթեր-
ցումը, որոնց աւարտելուն՝ յարեց. «Ա. Ա. կ'երկարիայի, և ամեն ատեն յայտնի ի-
շամական կարգապահութեամբ վառուած է» ու խնզրեց նախորդ նիստին
Արքայութիւնը կ'առաջարկուի սիրուած իշխանը կար-
եկեղեցւոյ, մեր Փրկչէն Յիսուսի ընդունեցաց
արքայութեամ փականը, մեղքելու կապերու
և արձակելու իշխանութիւնը, և բէ կ'ապրի
ցարդ իր յաջորդներուն մէջ և կը դատա-
վարէ (judicium exercet): Իր յա-
ջորդն և աւելապահը սորբ Եր. մեր Հայ-
րապետը, կեղեստինոս և պիտի պատասխանի
տրութիւնը միայն Հայրերուն որ
երտուած վճիռները հասարակաց հաւատքի
և ուղղափառ Եկեղեցւոյ միութեան կա-
նոնին համաձայն ի զլուխ հանէին, որուն
Փիլիմոս եպիսկոպոս կեսարիոյ կապա-
տվեան յարեց. «կեղեստինոսի սուրբ
եպիսկոպոսի առաքելական սուրբ աթոռը
այն թուղթերով զոր առ բարեկամաւ և
պիտի պատուածները, կիւրեղ, Յորնադ, Հոռու-
փոս, ինչպէս նաեւ կ. Պոլսոյ և Անտիոքի
սուրբ եպիսկոպոսներուն վճռին համեմատ ինչ որ
կանչիաց այս խնդրոյ շորջ տուած իր վր-

1. Mansi, IV, 1281. - 2. Անդ, 1283-1291. - 3.
Անդ, 1289. - 4. Անդ, 1293-6.

տատեցին միւս երկու նուիրակներն ալ՝
որոնց ստորագրութեան ներկայացուց կիւ-
րել նեստորի դատապարտութեան վճիռը :

Գ նիստին յաջորդող աեղեկագրին մէջ՝
զոր ժողովը կայսեր ուղղեց կիւրեղի, երեք
նուիրակներուն և զիւաւոր Հայրապետնե-
րուն ստորագրութեամբ, կը ծանուցանէ Ա-
րևմուտքի համախոհութիւնը Եփեսոսի մէջ՝
Արեւելքի Եկեղեցիներու Ա. նիստի որոշ-
ման, ու կը խնդակցի: Միւս կողմէն ա-
ւարտած ըլլալով ժողովին նպաստկը, սով,
հիւանդութիւն, ծերութիւն, թեմերու կա-
րեթը՝ կը ստիպէր փակումը, և թէ ժա-
մանակն էր Պուտոյ աթոռին արժանաւոր
յաջորդի մը ընտրութեան գալու:

Ուրիշ աեղեկագրը մ'ալ՝ զոր ժողովը
փութացուց կեղեստինոսի, հաշիւ կու տայ
իրադարձութեանց, կը յիշատակէ Յովհ.
Անտիքացիի չարամիտ բացակայութիւնը,
30 անարժան եպիսկոպոսներու հետ ընդ-
դիմութիւնը, ու չարաժողովով զկիւրեղ
և ԱՄԵԹՈՆ դատապարտելը. հուսկ արուած
ժողովական դատապարտութիւնը ու բա-
նազրանը Յովհաննիսեանց դէմ, զոր վա-
ւերացնելու կը հրաւիրէ զկիւրեղի
Այս թուղթիս ստորագրեցին Յորնալ, ե-
րեք նուիրակները և ուրիշ եպիսկոպոսներ¹:

Սակայն Հոռմ չփաւերացուց միայն այս
զերջին կէտը, հակառակ իր նուիրակներուն
մասնակցութեան, որովհետեւ իր յանձնած
իշխանութենէն անդին անցած էին: Մա-
սնաւանդ թէ պարտազըն որ Եփեսական
Հարք սիրաշահէին Արեւելեանները՝ թուղ-
թով մը: Կեղեստինոսի այս բայլը,
կայսրէն ալ օժանդակուած՝ Եփեսական
հայրերու մայուն յանձնախումբի փա-
կումը յետագելով, առիթ եղաւ երկու
կողմերու միջն բանագնացութիւններու,
որոնք 433ի ուրախալի համաձայնազրի
բանաձեւին առաջնորդեցին:

Հոս կը կնքենք մեր ցուցազրութիւնը՝
Եփեսոսի Ա. ժողովին Պաւանական հար-
ցին յարակից պատմական պարփառ-
ուն մէջ:

1. Mansi, IV, 1829-1837.

Արեւելք՝ մտքի նրբութիւններու և հան-
ձարի խոյանքներու հողն եղած է. Արեւ-
մուտք՝ կազմակերպութեան, գործնական
ձեռնարկներու, կամքի տիրապետութեան
հայրենիքը՝ հոռմէական բաղաբակրթու-
թեան զրոշմով: Քրիստոնէութիւնը աս-
տուածային կրօնը, իրեւ գերնական
ուժ մը կը վերածնի ու կ'ազնուացնէ

թնութիւնը, մեծապէս նպաստեց բաղաբա-
կրթութեան յաղթանակներուն զարգաց-
ման, և մինչ վստահացաւ Եկեղեցւոյ նաւին
զեկը Պետրոսի և իր յաջորդներուն՝ Հոռմի
Աթոռին վրայ, անոր յիշրին փարոսը գե-
րակշորէն Արեւելեան մտքով ճառագայթեց:

Արեւմուտք՝ իր աղանդներուն մէջ ալ
գործնական եղաւ. ապացոյց Պեղագեանու-
թիւնն և Լուտերականութիւնը. փրկագոր-
ծութիւնն ու մարդն է անոնց առարկան:
Արեւելք՝ իր մոլորութիւններուն մէջ իսկ
վերաթոփիչ հայկոց մ'եղաւ գնոստիկեա-
նութեան, Արիոսականութեան, Նեստորա-
կանութեան եւն. առարկան Եռանձնեայ
աստուածութիւնն է ու Քրիստոս ինքը:
Նեստոր՝ մոլորեալ մ'է, բայց նրամիտ.
Ա. կիւրեղ՝ նրբազոյն եւս ու թափանցող.
Ա. կեղեստինոս՝ կը փայլի իրեւ վար-
չագէտ, ողջամիտ ու կորովի կամք:

Հոռմ՝ միշտ ձեռք կարկառեց Արեւելեան
խոյացող մտքին թափառումները կորզե-
լու վերէն՝ որքան Արեւելքն իր աշն ամ-
փոփած չէր: Երկու աշխարհներու համե-
րաշխութիւնը հրաշակերտներ յօրինեց ծո-
ցին մէջ Եկեղեցւոյ՝ որ կը պանծայ միշտ
իր Արեւելեան Ա. Հայրերով:

Կիւրեղի արեւը չնսեմացաւ Հոռմի ե-
պիսկոպոսին ենթարկուելով, ոչ ալ կե-
ղեստինոսի հեղինակութիւնը՝ կիւրեղի մէջ
աստուածաբանութեան արծիւը ճանչնա-
լով: Այս ահա բաժանումով Արեւելեան
Եկեղեցիներու ինքնազլիսութիւնը պահպա-
նել իսկ չզօրեց հինաւուրց փայլն ու փառ-
քը. և այսօր իր խորակուած պարփառ-
ներէն ներս է արգէն բողոքականութիւնը
իր աւերիչ հոսանքով:

Հ. Կորսով Արքանուն

ՏԱՐԱՎՈՒՄ ԱՎՏՈՒՆ ԱՖԱՆՅՈՒՆ

(Տեսուն ԿՈՄԻՏԱՍԱՅ ԵՐԶԱՆԻԿ ՔԱՀԱՆԱՅԻ)

Աստուածածին կոյս, արարցին Ցևոյ, արփի վերամրարձ,
Բանին մայր եղեր, բարձող անիծից, բարեխօս լեր միշտ: Տէր ողորմեա:

Դովեալդ ի կանայս, զուշի համայն կուսից, գերազոյն զուար.
Դասուց երջանկաց, դուռը եղեր մտից, դուստր երանունի: Տէր ողորմեա:

Երկինք և երկիր, երանեն կուսիդ, երգս հրանցանուաց:
Չորք անմարմնականը, զիառս վերառաքեն, զաւեխս Ցննիկեան: Տէր ողորմ:

Էնն Աստուած ահեղ, էր միշտ ի Ցոր, Էսցաւ ի մերս:
Էնդ մողոց և զիմս, ընթայս մաղրանուաց, ընդունել հայցեմ: Տէր ողորմեա:

Թագաւորք հնդկաց, բօշակօր ազնիշ, բախանձեալ անձամբ,
Ժամադրեալ տեղոյնի, ժամանեալ հասին, ժըրացան դասուք: Տէր ողորմ:

Ի Սարայ եկեալ, ի սէր անմահին, ի սպառ ցննացին,
Լուսափայլ աստեղը, լուսերանգ շաշոք, լի սըրտիշ ըղձամբ: Տէր ողորմ:

Խայտային հովիչք, խաւնեալք ընդ հրեշտակու, խոշոներամ սրբովք:
Ծերլին Սիմեոն, Տաղկեալքն ալեօր, Տանեաւ ըզֆրիչն: Տէր ողորմեա:

Խամաց Մորք Հոգոյն, կոյսրն Ցընաներ, կեսմը ազգի մարդկան:
Խամաձայն և մեր, հովիչք և հրեշտակու, հրճեմէր միշտ ըզփառս: Տէր ողորմ:

Զայն Հօր ի բարձանց, ձայնեալ ամլորդոյն, ձայնիշ վրկայէր:
Դամպար լուսափայլ, ղեկալիս լեր ինձ, ղողեղոյն բարեաց: Տէր ողորմ:

Ճեմարան Բանին, ձաձանչ զերարիի, ձաշակ բաղցրուրեան:
Մաքրոր աղաւնույդ, մարմին ըզգեցաց, մարդացեալ Աստուած: Տէր ողորմ:

Յիսուս միածին, յերկինց խոնարհեալ, յարգանդի կուսին,
Նորագոյն բարիս, նրմանեալ քնորհեան, նորոգ պարզեւէ: Տէր ողորմ:

Շնորհօր Մորք Հոգոյն, շնորհատոց բարեաց, շարժէ զրարիս:
Պղնանեն ազդեալ, որովայն ամլոյն, որ երկրպագեալ: Տէր ողորմ:

Զէ յարոցեալ մեծ, չիայ ի Ցննիկան կանանց, չիք ոք բան ըզնա:
Պանձայի կուսիդ, պատուական ընթայս, պարզեւէն մողոցն: Տէր ողորմ: